

Ռ. Զ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈԹՈՂ ԳՐՈԶՆԻ ՔԱՂԱՔՈՒՄ

Գրոզնիում՝ Չեչենո-Ինգուշեթիայի ներկայիս մայրաքաղաքում, հայերը երևացել են 19-րդ դարի կեսերին: Առաջին նորաբնակները վաճառականներ էին, որոնց, որպես կանոն, հետևում էին արհեստավորները և հայ բնակչության մյուս խավերը: Նրանք գալիս էին գլխավորապես Հյուսիսային Կովկասի և Անդրկովկասի տարբեր տնտեսական կենտրոններից: Հիմնվելով նոր վայրերում՝ հայերը առաջին հերթին կառուցում էին տներ և եկեղեցիներ: Բացառություն չէր նաև Գրոզնի քաղաքը, որտեղ 19-րդ դարի 70-ական թվականներին կառուցվել է Սուրբ Թադեոս և Բարդուղիմեոս հայկական եկեղեցին: Այս եկեղեցին մինչև այժմ չի գրավել հետազոտողների ուշադրությունը, մինչդեռ այն որոշակի հետաքրքրություն է ներկայացնում ինչպես ճարտարապետական, այնպես էլ պատմական տեսակետից:

Գրոզնու հայկական եկեղեցու շինարարությանը հայերը ձեռնարկել են դեռևս 19-րդ դարի 60-ական թվականների վերջերին, այսինքն՝ քաղաքի հիմնադրումից ընդամենը հինգ տասնամյակ անց, որ անշուշտ կապված էր տեղի հայ համայնքի ջանքերի հետ: Շինարարության, ապա և գործառության ժամանակ նրա մասին հաղորդումներ էր հրապարակում պարբերական մամուլը, մասնավորապես «Տերսկիե վեդոմոստի» թերթը, «Արարատ» հանդեսը, ինչպես նաև որոշ պատմագիտական հրատարակություններ: Հայկական եկեղեցին սկսել է գործել 1872 թվականին[1]:

Էջմիածնի սինոդը ընդհանրապես գործուն աջակցություն էր ցույց տալիս Ռուսաստանի տարածքում գտնվող հայկական եկեղեցիների գործունեությանը: Սակայն մինչև 1875 թվականը Գրոզնու հայկական եկեղեցին չուներ իր ավագերեցը, և ծեսերը կատարում էին Վլադիկավկասից, Ղլլարից, Մոզդոկից, Թեմիր-Խան-Շուրայից և մոտակա այլ բնակավայրերից եկած քահանաները: Սուրբ Էջմիածինը հետևում էր Գրոզնու հայկական եկեղեցու գործունեությանը, հատուկ հանդիսությունների ժամանակ ուղարկում էր իր ներկայացուցիչներին, ինչպես նաև եկեղեցական հարկ էր հավաքում եկամուտի երկու տոկոսի չափով, որից մեկ տոկոսը՝ դպրոցական ֆոնդի, իսկ մեկ տոկոսը՝ եկեղեցական ֆոնդի համար[2]:

Ինչպես հայտնի է, ծխական համայնքները փոքր դեր չէին խաղում հայկական գաղութների կյանքում: Գրոզնու հայ առաքելական ծխական համայնքի կանոնադրությունից, որը հաստատել է Ամենայն Հայոց կաթողիկոսը 1914 թվականի նոյեմբերի 1-ին, հետևում է, որ այդ համայնքի անդամ կարող է դառնալ տասնութ տարին լրացրած

[1] Տես ՉԻ ԻՍՍՀ հանրապետական երկրագիտական թանգարան, ց. 4, թղթ. 43, գ. 16:

[2] Տես ՉԻ ԻՍՍՀ հանրապետական երկրագիտական թանգարան, ց. 4, թղթ. 43, գ. 22, 44;

յուրաքանչյուր քաղաքացի, որը պատկանում է տվյալ դավանանքին[3]: Ըստ որոշ տվյալների 1913 թվականին այս համայնքն ուներ 1200 անդամ[4]: Կանոնադրությունը, որը բաղկացած էր 71 կետից, պարունակում էր համայնքի կազմին ու խնդիրներին, նրա գործերի կառավարմանն ու միջոցներին (իրեղեն և դրամական) վերաբերող հարցեր: Համայնքի խնդիրներն էին հոգ տանել եկեղեցու բարեկարգման համար, գույքի, հանդերձանքի ձեռքբերումը, եկեղեցական երգչախմբի ստեղծումը, ծխական հոգաբարձության ընտրությունը, շինությունների կառուցման ու նորոգման համար հատուկ հանձնաժողովի նշանակումը, նշված մարմինների գործունեության և հաշվետվության ստուգումը, հարկ եղած դեպքում առանձին անձանց քաղաքացիական կամ քրեական պատասխանատվության ենթարկելը և այլն: Ծխական հոգաբարձությունը, որն ընտրվում էր երեք տարի ժամկետով, մասնավորապես եկեղեցու համար կազմում էր նախահաշիվ, որը ներառում էր ելևմտից բոլոր հոդվածները, ինչպես բուն եկեղեցու պահպանման,

Գրոզնու եկեղեցու զանգակատունը

[3] Տես նույն տեղում, գ. 1:

[4] **Д. Приволжский.** Весь Грозный и его окрестности. Владикавказ, 1914, с. 28.

այնպես էլ նրա բարեգործական գործունեության հետ կապված ծախսերի գծով (դպրոցի պահում, նպաստներ հայ առաքելական դավանանքի անապահով ու գործակուրկ մարդկանց և այլն):

Պետք է նշել, որ համայնքն իր գործունեության մեջ ներփակված չէր, մասնակցում էր նաև համաքաղաքային միջոցառումներին. օրինակ, 1812 թվականի Հայրենական պատերազմում Ռուսաստանի տարած հաղթանակի 100-ամյակի հոբելյանական հանդիսություններին, առաջին համաշխարհային պատերազմում տուժածներին ցույց տրվող նյութական օգնությանը և այլն[5]:

Իր գոյության հենց սկզբից համայնքը նպատակ է ունեցել համախմբելու Գրոզնիում և նրա շրջակայքում ապրող հայերին: Հայերի փոքր խմբեր էին ապրում Նաուրում, Շելկովսկայայում, Սլեպցովսկայայում և այլ վայրերում[6]: Այստեղ 1897 թվականին հայ առաքելական դավանանքին պատկանող մարդկանց թիվը հասնում էր 163-ի[7]:

Ինչպես հայտնի է, այն հայերը, որոնց Հյուսիսային Կովկաս էր բերել Պետրոս Ա-ն, գործոն դեր էին խաղում երկրամասի տնտեսական-առևտրական կյանքում: Հայտնի է նաև հայերի մասնակցությունը Կովկասում տեղի ունեցած ռազմական գործողություններին: Փառաբանված զորապետներ էին գեներալներ Մադաթովը, Բեհբութովը, Լոռիս-Մելիքովը, Ցիցիանովը, Կորգանովը, Տեր-Ասատուրովը և ուրիշներ: Խաղաղ ժամանակ հայ զինվորները շարունակում էին ծառայել տարբեր գնդերում ու գումարտակներում: Արխիվային տվյալները վկայում են, որ հայ զինվորներ են եղել նաև Գրոզնու մարզում տեղաբաշխված գնդերում: Գրոզնու հայկական եկեղեցու հոգևորականները կատարել են նրանց խոստովանության ու երդման արարողությունները, հսկել են ծոմապահությանը: Օրինակ, 1902 թվականի մարտ-ապրիլին հայկական եկեղեցում խոստովանվել են 102 հայ զինծառայողներ[9]: Հաճախ, զինվորական հրամանատարության խնդրանքով, հայկական եկեղեցու հոգևորականները մեկնում էին զանազան զորամասեր[10]: Իսկ բուն Գրոզնիում բնակվող հայ առաքելական դավանանքին պատկանող քաղաքացիների համար եկեղեցին ուներ ընդհանուր կանոններ[11]:

Գրոզնու հայկական եկեղեցին տեղավորված էր քաղաքի բուն կենտրոնում, ճակատով դեպի Դունդուկովսկայա փողոցը (այժմ՝ Հեղափոխության պողոտա): Այն քաղաքի տվյալ մասի ճարտարապետական զարդն էր: 1894 թվականի հունվարի 22-ին Գրոզնու ուսիկանության պետը եկեղեցու քահանա Հակոբ Ժամկոչյանի անունով արել է գրավոր առաջարկություն՝ եկեղեցու հին, խարխուլ հյուսացանկապատի փոխարեն կառուցելու նոր ցանկապատ, «որը կարող էր դառնալ ոչ միայն եկեղեցու գեղեցկություն, այլև քաղաքի զարդ»[12]: Որոշ ժամանակ անց կառուցվել է գեղեցիկ ցանկապատ մետաղյա ցանցկեն ճաղերով՝ ճարտարապետական քարե սյուների միջև[13]: Եկեղեցու գավթում գտնվում էր մի թևաշենք, որը կառուցվել էր եկեղեցու հետ նույն տարում և ծառայում էր որպես հոգևորականների և պահակի կացարան, եկվոր հոգևորականների ընդունարան: Ցուրտ օրերին այստեղ էին տեղի ունենում երեխաների մկրտությունը, եկեղեցական երգչախմբի երգեցողությունը, այն ծառայում էր որպես ծեր ծխականների սպասարան և այլն[14]: Հետագայում այդ շենքին կից կառուցվել է նաև հայկական եկեղեցական ծխական դպրոցի շենքը:

Գրոզնու հայկական եկեղեցին բավական խոշոր ճարտարապետական կառույց է եղել: Նրա նախագծային փաստաթղթերը, գծագրերն ու չափագրությունները չեն պահպանվել, ուստի այստեղ մենք նրա կառուցվածքի ու չափերի մասին միայն մոտավոր պատկերացում կարող ենք տալ՝ հիմնվելով նրա որոշ չափումների վերաբերյալ մեր հայտնաբերած տվյալների, ինչպես նաև լուսանկարների վրա:

Հաշվումները ցույց են տալիս, որ ամբողջ կառույցի երկարությունը եղել է 25 մետր, լայնությունը՝ 11,5 մետր, եկեղեցու բարձրությունը մոտավորապես հավասար է եղել երկարությանը, չհաշված զանգակատունը: Կա-

[5] Տես Զ-ի ԻՍՍՀ հանրապետական երկրագիտական թանգարան, ց. 4, թղթ. 43, գ. 1, 8, 19, 22:

[6] «Сборник материалов для описания местности и племен Кавказа», вып. 15, Тифлис, 1893, с. 143.

[7] «Терский календарь на 1897 г.», Владикавказ, 1896, с. 8.

[8] Նույն տեղում, գ. 10:

[9] Տես ՀՍՍՀ ԿՊԱ, ֆ. 52, ց. 1, գ. 4690, էջ 1, 7, 10, 11, գ. 4447, էջ 6—7, գ. 7275, էջ 4—8, 10, 13, 15, 17, 19, 21:

[10] Տես Զ-ի ԻՍՍՀ հանրապետական երկրագիտական թանգարան, ց. 4, թղթ. 43, գ. 2, 5, 13, 26:

[11] Տես Զ-ի ԻՍՍՀ ՊԿԱ, ֆ. 1, ց. 1, գ. 33, էջ 4:

[12] ՀՍՍՀ ԿՊԱ, ֆ. 52, ց. 1, գ. 3575, էջ 23, 26:

[13] Ցանկապատի տեսքն այստեղ նկարագրվում է ըստ քաղաքի հնաբնակների հուշերի:

[14] Տես Զ-ի ԻՍՍՀ հանրապետական երկրագիտական թանգարան, ց. 4, թղթ. 43, գ. 16;

ռույցի ճարտարապետական-կառուցվածքային վերլուծությունն ու ստացված չափականները, ինչպես նաև նախկին ծխականների ցուցմունքները հանգեցնում են այն եզրակացության, որ դա եղել է միանավ, բավական ծավալուն բազիլիկա, որն ունեցել է խաչագմբեթային տիպի դասական համադրում (այդ տիպը, ինչպես հայտնի է, առաջին անգամ կիրառվել է Հայաստանում, V դարում, իսկ քառասուն գմբեթավոր եկեղեցիներ արևմտյան կողմում կանգնատնով, ինչպես հայտնի է, կառուցել են հայերը XIX դարում Հյուսիսային Կովկասի մի շարք քաղաքներում): Հիմքը կազմվել է խաչաձև հատակագիծը, որն ունեցել է գմբեթավոր դահլիճի նմանությամբ ձգված ուղղանկյուն ուրվագիծ: Եկեղեցու գմբեթի ութանիստ թմբուկը ունեցել է կամարակապ նեղ լուսամուտ-խորշեր, բարձրացել է գմբեթի խաչամեջի վրա և պսակվել է հովանոցաձև ցանցկեն ծածկով: Մեծ ճաշակով են մշակված եղել շենքի հյուսիսային և հարավային ճակատները, որտեղ պատերի մաքուր մակերեսին աչքի են ընկել չորսական բարձր երիզավոր լուսամուտ-խորշեր: Դրանց վերևում եղել են փոքր, բայց արդեն կլոր խորշեր, ըստ երևույթին լրացուցիչ լուսավորման համար: Շենքը ձգված է եղել արևմուտքից արևելք, ճակատն ավարտվել է բրգաձև ծածկ ունեցող բազմանիստ աբսիդով: Փոքր-ինչ դուրս կարկառված (հյուսիս-հարավ) թևերը (որոնցից մեկը՝ շքաթևը, հարավայինը, ունեցել է եկեղեցու մուտքը), ձևավորված են եղել երկթեք սյունասրահներով:

Եկեղեցու ներքին ծավալային լուծումների մասին կարելի է ասել հետևյալը: Մեծ դահլիճը շենքի արևելյան մասում ավարտվում էր կիսակլոր սյունասրահ-բեմով: Արևելյան կողմից այն ձևավորված էր դարպասանման մեծ մուտքով ու գավիթով[15]: Իսկ միջին մասը լուծված է եղել կենտրոնագմբեթ տաճարների սկզբունքով, որտեղ բազիլիկայի երկայնակի ու լայնակի նավերը հատման հետևանքով կազմել են կիսակլոր կողային տարածք: Իսկ բարձր կամարները չորս կողմից պահում էին թաղերը: Դահլիճը զարդարված է եղել սրբապատկերներով, կահավորված է եղել զանազան եկեղեցական գույքով: Բեմն ունեցել է զարդանկարված վարագույր: Ըստ նախկին ծխականների հուշերի, եկեղեցու ներքին հարդարանքը եղել է հարուստ ու շքեղ: Դա զգացվել է առանձնապես այն ժամանակ, երբ բազում մոմերի լույսը լուսավորում էր սրբապատկերները, պատերի ոսկեզօծ հարթաքանդակները և մյուս իրերը: Ի դեպ, այդ մոմերը գնվում էին տեղում կամ բերվում էին Աստրախանից ու Մոսկվայից[16]:

Սկզբնապես եկեղեցու արևմտյան ճակատին կից կառուցված է եղել երեք հարկաշարքով կանգակատուն քառակուսի հատույթով՝ կողմի մեծությունը 5,68 մետր, 17,04 մետր բարձրությամբ (մինչև գմբեթը): Բոլոր երեք հարկաշարքերը, որոնք շատ քիչ էին փոքրանում լայնությամբ, ունեցել են ուղղանկյուն հատվածք: Գետնից վեր հիմք են ծառայել երկու առաջասյուն հինգ աղյուսի բարձրությամբ և երեք կամար՝ յուրաքանչյուրը 3,55 մետր լայնությամբ: Իսկ վերին երկու հարկաշարքերի ետևի պատերը հիմնված են եղել եկեղեցու պատի վրա երեք աղյուսի լայնությամբ առանց սյուների: Դրա հետևանքով ներքևի բոլոր երեք կամարները մեծ ծանրության տակ խոր ճեղքեր են տվել, ճեղք է տվել նաև եկեղեցու պատը:

Եկեղեցու երեցփոխ պաշտոնավարող կապիտան Դավիթ Օհանջանյանը Աստրախան է ուղարկել վեկուցագիր, որով հայտնվում էր կանգակատան վթարային վիճակի և, դըժբախտ պատահարներից խուսափելու համար, շտապ միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտության մասին: Դ. Օհանջանյանն առաջարկում էր քանդել կանգակատունը և նրա տեղը կառուցել նորը, որի նախագիծը նա կցել էր վեկուցագրին: Ծխական համայնքն ընտրել էր հեղինակավոր հանձնաժողով, գլխավորապես վաճառականներից: Հանձնաժողովը, հանգամանորեն հետազոտելով կանգակատան վիճակը, կազմել էր արձանագրություն նրա վթարային վիճակի մասին[17]:

Պետք է ասել, որ կանգակատան վերականգնման ու եկեղեցու հիմնական շենքի նորոգման, ինչպես նաև ծխական դպրոցի շինարարության հարցերը երկար ժամանակ չէին լուծվում հիմնականում անհրաժեշտ դրամական միջոցների պակասության պատճառով, օրինակ, եկեղեցու 1885 թ. ամբողջ դրամական եկամուտը 444 ռուբլի էր[18]: Դա պայմանավորված էր ծխականների փոքր թվով (1886 թվականին՝ 180)[19], որն առանձնապես չմեծացավ մինչև 1880-ական թվականների վերջը:

[15] Տես «Արարատ» հանդես, էջմիածին, 1904, փետրվար, էջ 104:

[16] Տես ՀՍՍՀ ԿՊԱ, ֆ. 52, ց. 1, գ. 3205, էջ 44:

[17] Տես նույն տեղում, գ. 3575, էջ 2, 4, 32—35:

[18] Տես ՀՍՍՀ ԿՊԱ, ֆ. 52, ց. 1, գ. 3205, էջ 10:

[19] «Алфавитные списки армяно-григорианских церквей и магометанских мечетей». СПб, 1886, с. 20.

Գրոզնու հայ բնակչության նկատմամբ անտարբեր չէին մերձակա քաղաքների հայ բնակիչները: Հայտնի է այսպիսի մի փաստ: 1893 թվականի օգոստոսի 28-ին վրացահմերեթյան թեմական խորհուրդը հայտնել է Գրոզնու հայկական եկեղեցու քահանային, որ թիֆլիսահայ Պետրոս Բաղինյանցը 1892 թվականին կտակ է թողել, որով, այլ նվիրատվությունների հետ մեկտեղ, 1000 ռուբլի է հատկացրել Գրոզնու հայկական եկեղեցական-ծխական դպրոցի համար: Այդ դրամը 1894 թվականի մարտի 29-ին հանձնվել է Գրոզնու հայկական ծխական խորհրդին, ապա ի պահ տրվել Աստրախանի հայկական դպրոցական դրամական ֆոնդին, այնուհետև՝ Աստրախանի քաղաքային հասարակական բանկին[20]:

Գրոզնու վաճառական Դավիթ Բաղդասարի Շավելյանցը 1899 թվականի հունվարի 28-ին Աստրախանի թեմի առաջնորդին պատրաստակամություն է հայտնել փող տրամադրելու եկեղեցու նորոգման և զանգակատան վերակառուցման համար[21], բայց նրա միջոցներն ինչ-ինչ պատճառներով չեն օգտագործվել այդ նպատակով: Դարասկզբին հին, խարխլված զանգակատունը քանդվել է և նրա տեղը, հիմքի աննշան ընդարձակմամբ, նոր նախագծով, կառուցվել է նորը: Դա իրագործվել է Գրոզնու բնակիչներ Մարիամ և Գրիգոր Բեգլարյանների միջոցներով, որի վերաբերյալ կա Ամենայն Հայոց կաթողիկոսի 1910 թվականի սեպտեմբերի 22-ի կոնդակը՝ «Գոհունակության և օրհնության Գրոզնա քաղաքի տիկ. Մարիամ և պ. Գրիգոր Բեգլարյան ամուսինների անունով՝ տեղական եկեղեցու զանգակատունն իրանց ծախքով շինելու համար»[22]:

Նախորդի նման նոր, արդեն երկու հարկաշարքով և ավելի փոքրածավալ զանգակատունը կառուցվել է կարմիր աղյուսից: Ըստ նախագծի այն ունեցել է 11,7 մետր բարձրություն մինչև գմբեթը, հատույթը նույնպես եղել է քառակուսի՝ կողմի մեծությունը 5,9 մետր: Հիմքի վրա այստեղ արդեն պատվանդան են ծառայել քառակուսի հատույթով չորս սյուն, որոնց միջև բարձրացել են պատերն ու կամարները: Զանգակատան նախասրահի ձախ կողմում եղել է շինություն զանգակատան վերնահարկը տանող աստիճանների համար: Զանգակատունը վերջանում էր սաղավարտանման ծածկով, որն իր հետաքրքիր ուրվանկարով բնորոշ էր այդ ժամանակի ռուսական շինարարական մշակույթին:

Կանգնած լինելով առջևում՝ զանգակատունը շատ լավ տեսանելի էր իր ձիգ ծավալով, ձևերի ու կարդատարրերի հստակ ու խիստ ուրվագծերով, ընդհանուր հանդիսավոր տեսքով, երկթեք տանիք ունեցող ուղղանկյուն ճակատամուտքով:

Գրոզնու հայկական եկեղեցին մոնումենտալ կառույց էր ծավալատարածական հետաքրքիր լուծումով, ազգային ճարտարապետության գծերով, որ լիովին համապատասխանում էր Հայ Առաքելական Եկեղեցու ավանդներին և տեղի հայ բնակչության հոգևոր պահանջմունքներին: Այն Ռուսաստանում եղած հայկական մոնումենտալ ճարտարապետության լավագույն նմուշներից էր[23]:

---

[20] Տես ՀՍՍՀ ԿՊԱ, ֆ. 52, ց. 2, գ. 672, էջ 36—38, 60, 61, 63, 66, 74:

[21] Տես նույն տեղում, գ. 375, էջ 43:

[22] «Արարատ», հանդես, էջմիածին, 1910, հոկտեմբեր, էջ 907:

[23] Գրոզնու հայկական եկեղեցու ամբողջ համակառույցի մասին տես նաև՝ **Р. З. Багдасарян.** Об армянской церкви в Грозном. «Историко-филологический журнал», 1985, № 1(108), сс. 331—334.